

գծով՝ բոլորակ մը քաշելու ըլլաս, ու  
ան բոլորակին մեծութեանը համե-  
մատ լեռներուն բարձրութիւնն ալ  
նշանես, ամէն մէկ լեռը այնչափ պըդ-  
տիկ կ'ըլլայ՝ որ գրեթէ աչքի չերև-  
նար :

Լըրկրիս երեսը հիմա ինչ ձեւ որ ու-  
նի՝ միշտ նոյնպէս եղած չէ, հապա  
շատ անգամ աշխարհքս տակնուվրայ  
եղած է, ու երկրիս ձեւը փոխուած է,  
անանկ որ ինչուան մեծամեծ ծովեր  
ցամաք եղած են, ու ցամաքները ծով։  
Լըրկրաբաններուն մէկ կարծիքն ալ  
աս է թէ ասկէ հինգ վեց հազար տա-  
րի առաջ, այսինքն երկրիս երեսի ա-  
րարածները ստեղծուելէն առաջ՝ աշ-  
խարհքս հալած ու կրակի պէս տաք  
նիւթ մը եղած պիտի ըլլայ որ կամաց  
կամաց պաղելով հողերուն կարգերը  
ձեացեր են, ջրերն ալ լուսուծոյ հրա-  
մանովը երկրիս ցած տեղուանքը քա-  
շուելով՝ ծովը ըսուեր են : լուս կարծի-  
քին վրայ յաջորդ յօդուածին մէջ ա-  
ւելի տեղով կը խօսինք :

Հ. Տ. Թ.

#### ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ

Պարծէնիոդունէան ժաման :

լոյնէն աւելի լապանիացւոց մէջ  
շատ անուններ ունենալը ազնուակա-  
նութեան նշան կը սեպուի : լուսոնցմէ  
մէկը անգամ մը գիշերանց կը հաս-  
նի կաղղիայի իջևաններէն մէկը,  
գուռը կը զարնէ կը զարնէ, վերջա-  
պէս պանդոկապետը կ'արթըննայ, կը  
հարցընէ պատուհանէն թէ „լով-  
է : — Լը եմ, կ'ըսէ լապանիացին,  
Տոն խուան Փէտրոյ Ներնանտէզ  
• Ոտոտիկէզ լիլլա-լովա, լոմա լու-  
ափրա, ասպէտ լանթիակոյի և լու-

<sup>1</sup> Տըանգիծ կըսուփ բոլորակի մը ճիշդ մէտե-  
ղէն գիմացէ գիմաց քաշուած գիծը :

քանթարայ „ : Պոնդոկապետը կ'ը-  
սէ վերէն թէ „ (յողութիւն կ'ընէք,  
այդչափ մարդու համար տեղչունիմ, „,  
ու պատուհանը կը գոցէ :

Հարիաւոր բանը ուշացնել :

Ո՞ւսութիւն մէկը ֆրանչիսկոս Ա  
թագաւորին իմացուց թէ պարոնին  
մէկը քեզմէ նախատինք մը առած ըլ-  
լալով, կ'ուզէ զքեզ սպաննել : “ Ծակ  
որ սպաննէ, հինգ վայրկենէն թող  
կախուի, ըսաւ թագաւորը : “ Լս  
կ'ուզէի, որ հինգ վայրկեան առաջ  
հրաման տայիր որ կախուէր, ըսաւ  
միմոսը :

Փուած աւելը արարուալ :

Օ՞ւսութիւն մէկը մեռնելու դա-  
տապարտուելով՝ երբոր տեսաւ որ ժո-  
ղովուրդը իրմէ առաջ կը վազէ մա-  
հուան տեղը, դարձաւ ըսաւ . “ լուս  
այնչափ կ'արտորաք, չէք գիտեր որ  
առանց ինծի բան ըլլար „ :

ՈՉ երբէք պիտի գանգատիս որ շատ մարդիկ  
ապերախտ գտնուեր են քեզի գէմ. վասն զի ատի-  
կայ նշան է թէ շատ բարիք ըրած ես :

ՆԱՅԻ որ քու սրտիդ հանգստութիւնը կաման-  
հանգստութիւնը մարդկանց խօսքերուն վրայ ըլլ-  
լայ. վասն զի քու ըրածդ ուրիշները աղէկ ալ մեկ-  
նեն՝ գէշ ալ մեկնեն, գուն ինչ ես նէ՝ ան ես :

Ով որ մարդկանց հաճոյ ըլլալ չփափաքիր, ով  
որ մարդկանց անհաճոյ ըլլալէն չվախնար, անոր  
հանգստութեանը չափ չկայ :

ԹՈՎԾ. ԳԵՄԲԱՑԻ

ԵՐԲԵՄՆ մարդս աւելի գիւրաւ խելք կը սորվի  
չար գործքի մը հանգիպելով, քան թէ բարի օրի-  
նակ տեսնելով : Ըստ աղէկ բան է չարէն բարի  
հանելը . վասն զի չարութիւնը խիստ սոլորական  
է, իսկ բարիքը խիստ սակաւագիւտ :

ԳԱՍՏԱԼ